ՍԱՐԱԼԱՆՋ

Գտնվում է Հառիճ գյուղից փոքր-ինչ հյուսիս-արևելք: Գյուղը հարուստ է հնագիտական հուշարձաններով, դամբարանադաշտերով ու գյուղատեղիներով:

Գյուղամիջյան եռանավ բազիլիկ հորինվածքով եկեղեցին վաղմիջնադարյան շինության հիմքերի վրա կառուցվել է XIX դ.: Մեր վերջին այցելության ժամանակ այն նորոգվում էր: Պատերի մեջ ագուցել են խաչքարեր ու քանդակազարդ քարերի բեկորներ: Եկեղեցուց հարավ միջնադարյան գերեզմանոցն է, որտեղ օրորոցաձև և հարթ ուղղանկյունաձև տապանաքարերից բացի, պահպանվել են նաև խաչքարեր ու քառանիստ կոթողի պատվանդան: Տապանագրերը հիմնականում XIX-XX դարերից են, բացառությամբ մեկի, որը վկայակոչում ենք ստորև.

125*. ՏԱՊԱՆԱՔԱՐ. ուղղանկյուն օրորոցաձև, գյուղի հարավային գերեզմանոցում, հարավային նիստին, 2 տող.



ԱՅՍ Է ՏԱՊԼԱՅՆ ԱԼԷՔՍԱՆԻՆ ԵՒ ՈՐ/ԴԻ ՅԱԿՈԲԻՆ: ԹՎԻՆ [Ռ]ՃԻԲ (1673):

Ծանոթ. *Դատելով տապանագրից՝ ննջեցյալները երկուսն են՝ հայր և որդի Ալեքսանն ու Հակոբը, ովքեր, թերևս, համաճարակից կամ դժբախտ պատահարից են մահացել: Միևնույն տապանաքարի վրա երկու ննջեցյալի անվան առկայությունը բնավ չի ենթադրում, թե նրանք թաղվել են մեկտեղ: Հարևանությամբ առկա տապանաքարը, ամենայն հավանականությամբ, նրանցից մեկինն է, պարզապես տապանագիրը կազմվել է շիրմաքարերից մեկին:*